




Ա Ր Ա Ր Ա Տ

ԹԻԻ Թ. — ՇՐՋԱՆ ԻԳ. 1891 ՏԱՐԻ ԻԴ. ՍԵՊՏԵՄԲԵՐ

ԿՐՕՆԱԿԱՆ

Ո Տ Ն Ա Լ ՈՒ Ա Յ:

Յառաջ քան զտօնն Զատկի, գիտաց Յիսուս, թէ Հասեալ է ժամ Նորա՝ զի փոխեսցի յաշխարհէ աստի առ Հայր, սիրեաց զԷրան որ յաշխարհի աստ են. իսպառ սիրեաց զնոսա: Եւ ի լինել ընթերցայն, Սատանայի իսկ արկեալ էր ի սիրտ՝ զի մասնեսցէ զնա Յուդա Միմովնի իսկարիտապալ: Գիտաց Յիսուս, զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա և թէ յԱստուծոյ ել և առ Աստուած՝ երթոյ: Յառնէ յընթերցաց անտի, և գնէ զՀանդերձան, և առեալ զհենջակ մի՝ սփածաւ: Եւ ապա առեալ Զուր՝ արկ ի կոնք, և սկսաւ լուսնալ զոտս աշակերտացն, և սրբէր զհենջախաւն՝ զոր սփածեալ էր:

Գայ առ Սիմոն Պետրոս, և նա առէ ցնա՝ Տէր, Դու զիմ՝ զոտս լուանաւ: Պատասխանի ետ նմա Յիսուս՝ և ասէ: Զոր ինչ ետս գործեմ, դու այժմ՝ ոչ գիտես, բայց ապա գիտասցիք: Ասէ ցնա Պետրոս, Ոչ լուացես զոտս իմ՝ յաւիտեան, պատասխանի ետ նմա Յիսուս, Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն: Ասէ ցնա Սիմոն Պետրոս, Տէր՝ մի միայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխս: Ասէ ցնա Յիսուս, Լուացելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտսն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է, և դուք սուրբ էք, այլ ոչ ամենեքին: Զի գիտէր զայն՝ որ մատնելոցն էր զնա, վասն այնորիկ ասաց, թէ Ոչ ամենեքին սուրբ էք: Եւ յորժամ՝ լուաց զոտս նոցա՝ առ զհանգերձսն իւր՝ և զարձեալ բազմեցաւ, և առէ ցնոսա, Գիտէք զինչ արարիդ ձեզ: Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարեք ասէք, քանզի եմ իսկ: Իսկ արդ՝ եթէ ես լուացի զոտս ձեր՝ Տէրս և վարդապետս, և դուք պարտիք զմիմեանց սոսս լուանալ: Զի օրինակ մի ետու ձեզ, զի որպէս ես ձեզ արարի, և դուք առնիցիք: Ամէն ամէն ասեմ ձեզ, ոչ է ծառայ մեծ քան զսէր իւր, և ոչ առաքեալ՝ մեծ քան զայն, որ առաքեացն զնա: Եթէ զայս գիտէք, երանելի ես էք՝ եթէ առնիցէք զայս (Յովհ. Ժ. 1—17):

«Սիրեաց զիւրսն» որ յաշխարհի աստ են, իսպառ սիրեաց զնոսա: Այս խօսքերով սկսում է, եղբարք, Յովհաննէս առաքեալն այն մեծ և սրտառու հանդիսի պատմութիւնն, որ իմ՝ ներկայ քննութեան առարկան է: Որպիսի պարզութիւն է այս խօսքերի մէջ, որպիսի չափաւոր և խորին զգացմունք է բուխնդակուում զոցա մէջ: Այն սէրն, որոյ մասին խօսում է Ս. Յովհաննէսը—ինքն ձանաչել էր նրան, ինքն էր նորա առարկան եղել: Այս խօսքերը գրեւիս նա յիշում էր, գուցէ, աշակերտների վարմունքն վերջին շաբաթուայ ընթացքում: Նա իւր յիշողութեան մէջ առաջ էր բերում նոցա երկբայութիւնքը, նոցա անտարբերութիւնքը, նոցա ետական նախապաշարմունքները, նոցա երկչոտութիւնը, նոցա ամօթալի ուրացութիւնը և հիանում էր այն արտասույթ սիրոյ վերայ, որն ոչինչ չը կարողացաւ թուլացնել, որ աճեցաւ մարդոց զիմադրութեան և ատելութեան չափով և որ ի վերջոյ ի տես մարդոց ապերախութեան, երևեցաւ իւր պայծառագոյն փայլով: Այս, նա իսպառ

սիրեաց զնոսա»։ Իսպառ, այսինքն մինչև վերջին ժամն, երբ պարզուում է, թէ ինչու մն է կեանքի իսկական խորհուրդը, երբ ամեն ինչ կեղծ և մտացածին ունչանում է և անհետանում։ «Իսպառ» այսինքն մինչև անասելի չարչարանաց բուլէն, մինչև մահուան տագնապի բուլէն Գողգոթայում, այն խաչի վերայ, ուր նրան տեսաւ Ս. Յովհաննէս, խոնարհելով ողորմածութեան առաջ, որ իրան զոհ է բերում մարդոց փրկութեան համար։

Յիսուս մի անգամ ևս կամենում է ցուցանել այս սէրն իւր աշակերտներին և այն ոչ լոկ խօսքերով, այլ այնպիսի մի գործողութեամբ, որ պիտի տպաւորուէր ընդ միշտ նոցա յիշողութեան մէջ։ Այս գործողութեամբ Նա կամենում է տպաւորել այն գաղափարն, որով ներշնչուած էր Նորա ամբողջ պաշտօնը — տպաւորութիւնը — կամուոր խոնարհութեան գաղափարն, որոյ համար Նա իւր անձը նուիրեց մարդկութեան։ Սորա հետ միասին Նա կամենում է ցոյց տալ իւր աշակերտներին, որոնք յիշում էին առաջին տեղի համար Նորա ապագայ թագաւորութեան մէջ, որ ամենաբարձր մեծութիւնը խոնարհութեան մէջ է (տես Գուկ. ԽԲ. 24)։ Ահա ինչու Նա հանում է իւր հանդերձներն և իբրև ծառայ միայն պատմունանով ծածկուած աւնում է զենջակ, և ծնկաչոք լուանում է իւր աշակերտների ոտները։

Արդեօք ուշադրութիւն դարձրի՞ք դուք, թէ ինչ խօսքերով է խօսում այստեղում Ս. Յովհաննէս աւետարանիչն։ «Գիտաց Յիսուս, զի զամենայն ինչ ետ Հայր ի ձեռս նորա և թէ յԱստուծոյ ել և առ Աստուած երթայ», վեր կացաւ ընթրիքից... և սկսաւ լուանալ աշակերտների ոտները։ Որպիսի դարմանալի զուգադիպութիւն։ Միթէ Յիսուս Գրիտոսս այդ աստիճանի խոնարհութեան հանում է, նորա համար, որ գիտէ, թէ Նա Աստուծմէ ելանում է և առ Աստուած գնում է։ Այո, եղբարք, այդպէս էլ պէտք է լինի. այս գաղափարի և այս գործութեան մէջ կայ խորը ներքին կապ։ Որքան իսկապէս բարձր է մարդկային հոգին, այնքան աւելի նա ընդունակ է խոնարհութեան։ Ի՞նչ նշանակութիւն ունին Յիսուսի համար, որ կանգնած է Հօր կամքով անսահման բարձրութեան վերայ, մեր կեղծ մեծութիւնը և մեր պայմանաւոր կար-

գերը: Ի՞նչ են Նորա Համար մեր սնափառութիւնը, մեր մանր վէճերը, մեր անձնասիրութեան և հպարտութեան կռիւները: Ի՞նչ նշանակաւ իւրն ունին մարդկային պարսաւանքն ու ատելութիւնը Նորա Համար, որ Աստուծոյ հաւանութիւնն է վայելում: Ի՞նչ նշանակութիւն ունին բոլոր աշխարհային կորանքն ու զրկանքը Նորա Համար, որ ճաշակել է երկնքի փառքը:

Ընդունակ ե՞նք արդեօք մենք այս մեծութիւնը հասկանալու: Յիշում ե՞նք արդեօք, որ մենք էլ կոչուած ենք երթալու Տիրոջ մօտ և որ մեր ամենաբարձր փառքն Նորա մօտ է: Ո՛չ, անկեղծութեամբ խոստովանում ենք՝ փոխանակ մեր կոչման բարձրութեան վերայ մնալու. մենք աշխարհային ունայնութեան շրջանում ենք դեգերում, որ իշխում է մեր վերայ: Մենք շատ փոքր ենք և չընչին խոնարհել գիտենալու Համար և գուցէ մինչև անգամ մեր սպասարկութեան մէջ առ Աստուած մոցնում ենք մեր ինքնասիրական հոգսերը մեր անձնական արժանեաց մասին: Ո՛վ, աշխարհային փառքի խեղճ երկրպագուք, ծուներ իջած Փրկչի առաջ ճանաչեցէք և խոստովանեցէք իրան խոնարհեցնող ողորմածութեան մեծութիւնը: Տեսէք Նրան, տէրերի Տիրոջ, որ կատարում է ծառայի պաշտօնը, ամենատոոր ստրկի պաշտօնը, որովհետև Արեւելքում ամենալիերջին ծառան է լուանում սեղանի մօտ ընկողմնածնների ոտները: Համեմատեցէք այս տեսարանի հետ եսականութեան թէկուզ ամենափայլուն և գովաբանուած մեծութիւնը—ինչպէս սա փոքրանում է և նուաստանում այն վսեմ՝ անձնազոհութեան առաջ: Ահա ինչ էր կամենում Յիսուս Քրիստոս ցոյց տալ աշխարհին, ահա ինչ տեսած չէր հին աշխարհը, որ իւր լեզուներից ոչ մէկով չը գիտէր արտայայտել «խոնարհութիւն» խօսքը: Յիշենք և այն, որ Յիսուս Քրիստոս ենթարկուելով այդպիսի ստորացման, բարձրացրեց մարդկութիւնը: Անտարակոյս Նրանից առաջ էլ կատարուում էին Նորա գործի նման գործողութիւնք, այսպէս զորօրինակ Հնդկաստանում Բուդդան—գուցէ հեթանոս աշխարհի ամենից ազնիւ և համակրելի անձնաւորութիւնը—գործ էր դնում աղքատների և հիւանդների ցնցոտիքն ու կեղատու մահիճները: Բայց ուշի ուշով Նորա գործողութիւնքը զննելով իսկոյն կը նկատենք, որ Բուդդան այդպէս

վարուելով ձգտում էր կատարել խիստ ճգնութեան պահանջներն, որպէս զի անարժանաւոր տանջանքներով մաքրուի: Որպիսի մեծ տարբերութիւն կայ այգպիսի ձգտման և Յիսուս Քրիստոսին ոգեւորող զգացմունքի մէջ: Այն օրից, երբ Քրիստոս վերնայարկում ծուռ իջաւ ծառայի պաշտօնը կատարելու համար—ծառան բարձրացաւ, որովհետեւ, որքան էլ մարգկային ատելութիւնը նրան ստոր էր դասում, նա գիտէր, որ երբեմն ինքն Փրկիչը Նորա վշտի և նախատանայ մասնակից էր:

Զարմանքն, որ այս անսովոր վարմունքը յարուցանում է՝ այնպէս մեծ է, որ Առաքեալները կարծես ընդարմացած լուում են: Նրանցից միայն մէկը չէ զսպել իւր վրդավմունքն—դա Պետրոսն է, որ դիւրութեամբ ենթարկւում է տաւջին տպաւորութեան: Ամեն գոյնատեսակ դէպքերում նա առաջինն է խղում լուութիւնը, երբեմն, երբ առաքեալները տատանուում էին Յիսուս Քրիստոսի հարցման պատասխանել, նա առաջինն ազաղակեց. «Դու—Քրիստոսն ես, կենդանի Աստուծոյ Որդին»: Միւս անգամ էլի նա Քրիստոսից հեռացող ամբոխի առաջ ասաց. «Տէր, Ո՞ւմ մօտ մենք կարող ենք երթալ, բայց եթէ ոչ Քեզ մօտ»—և այս անգամ էլ նա չէ կարողանում լուռ հանդիսատես լինել այս յուզիչ և վրդովիչ տեսարանին ու ազաղակում է. «Տէր, Դո՞ւ զիմ զոտս լուանա»:

Այն ժամանակ Յիսուս պատասխանում է այն յայտնի խօսքերով, որոնք արդէն բազմիցս կրկնուած էին և բազմիցս առաջն առած էին երկբայողների և տատանուողների բերաններից թուչող տրտնջանաց. «Զոր ինչ եսս գործեմ, զու այժմ ոչ գիտես, բայց ապա գիտասցիք»: Դու չը գիտես: Այո, ինչպէս կարող էր Պետրոսն այն հասկանալ, Պետրոսն, որ երեւակայում էր, թէ մօտիկ է իւր վարդապետի համար պատրաստուող թագաւորութիւնը—Պետրոսն, որ մօքով տեսնում էր, թէ Նրուսդէմը արդէն նուաճուած է յաղթող Մեսսիայի իշխանութեան ներքոյ, Նորա թշնամիք ջնջուած են և Նորա թագաւորութիւնը հաստատուում է ազգերի վերայ—Պետրոսն, որոյ սիրտը բաբախում է սպասելով, թէ ահա մի քանի օրից յետոյ կը կատարուին նորա ցնորքները: Յե-

տոյ նա կը հասկանայ, յետոյ կը գիտենայ, որ կայ այլ թագաւորութիւն էլ բացի նրանից, որոյ մասին նա երազում էր՝ այլ պատկ, այլ յաղթութեան թիւն էլ։ Խաչը ցոյց կը տայ նրան, թէ դէպի որպիսի յաղթանակ ձգտում է նորա Վարդապետը և այն նուաստութիւնն, որ այժմ՝ յիշուած է նրան, միշտ կենդանի կը մնայ նորա աչքի առաջ, որպէս զի նրան էլ ուսուցանէ իւր մեծութիւնը խոնարհութեան մէջ սրտնելու։

Յիսուսի Պետրոսին ասած խօսքերը վերաբերում են և մեզ ամենքիս և մենք պէտք է հասկանանք նրանց. «Զոր ինչ ես գործեմ դու այժմ ոչ գիտես. բայց ապա գիտաւիր», — այսպէս կարող է Տէրն ասել իւրաքանչիւր մարդու, որ տրոնջում է իրան պատահող դժբաղդութեան համար։ Աստուծոյ խորհուրդներն մեր հասկացողութիւնից բարձր են. մինչև անգամ անարգ և փցուն էակի մէջ էլ կան գաղանիք, սրտնք անհասանելի են մեր աղքատիկ բանականութեան։ Զորօրինակ բացատրեցէք ինձ, թէ ինչո՞ւ դադարում է գեղեցիկ և օգտաւէտ կեանքը, մինչդեռ այնքան ապարդիւն էակներ կենդանի մնում են քարշ աճելու համար իրանց խղճով կեանքը տանջանայ մէջ։ Բացատրեցէք ինձ, թէ ինչո՞ւ փորձութիւնն ու աղէտքը յաճախ թափուում են ամենից բարեպաշտ անձանց վերայ և ըստ երևութին խնայում են այն անձանց, որոց հպարտութիւնը կարող էին խոնարհեցնել իրանց հարուածներով։ Բացատրեցէք ինձ այն ամենն, ինչ որ բնութեան և պատմութեան մէջ թուում է չարաղէտ ու օրհասական։ Ինչո՞ւ, զորօրինակ, գգուած և սիրելի մանուկը, շրջապատած իւր բարեպաշտ ծնողների հոգացողութիւններով, չարեաց ճանապարհով է գնում այն ժամանակից սկսած, երբ միայն կարողանում է ինքն իրան տէր լինել և շատ վաղ խորասուզուում է յանցանաց անդունդի մէջ, վշտացնելով և մինչև իսկ գերեզման մոցնելով իւր ծերունի հօր ալիքը։ Բացատրեցէք ինձ բոլոր անարգարութիւնք և ոչ իրաւացի տանջանքներն ու վշտերը։ Բացատրեցէք ինձ թէ ինչո՞ւ այնքան հազարաւոր մարդիկ դատապարտուած են ծնելու և ապրելու աղքատութեան և անարգանայ մէջ։ Ո՞հ, մենք քննադատում ենք այս, մենք այս վշտերը ծածկում ենք մեր

փիլիսոփայութեան խզճուկ ցնցոտիներով, բայց միթէ այս կը նշանակէ բացատրել: Բայց և ինքն Աւետարանը—արդեօք կատարելապէս բացատրում է մեզ այս ամենը: Ո՛չ, դուք գիտէք, որ ոչ, կան գաղանիք, որոց առաջ պէտք է լռութիւն պահպանել, կան վշտեր, որոց պատճառն անհասանելի է և՛ ամենալուստւոր ուղղափառութեան համար, որ աշխատելով ամեն ինչ բացատրել միայն բարկութիւն է յարուցանում և զայրացնում է մարդոց սրտերը... Այո՛, կան վշտեր, երբ միխթարութեան ամենաբարեպաշտ խօսքերը չարժեն միանգամ լռութեամբ ձեռք սեղմելուն չափ էլ:

Բայց և այնպէս, խոնարհելով հանդերձ մեր գլուխը Տիրոջ ճանապարհների անհասանելիութեան առաջ, մէնք էլի հեռու ենք ճակատագրին հաւատալից, մեր հպատակութիւնը չէ անմիտ և անկրշիւ անձնուիրութիւն բաղդի կամքին առանց յուսոյ և միխթարութեան: Ատուհանք իմ ինչպէս ծանր պիտի լինի գլուխը կոյր անհրաժեշտութեան առաջ խոնարհելը: Դուք այստեղ անդօր էք, օգնել չէք կարող, ասում են մեզ, սովորական միխթարութեան համար, աշխարհիս մարդիկ և կարծում են, թէ այդպիսի ճակատագրական գաղափարի դարձուածով համոզեցին մեզ: Մենք ոչինչ չենք կարող անել, միթէ չէք տեսնում, որ հէնց սորա մէջն է այն, որ զօրացնում է վիշտն և զայրացնում է: Իւր անզօրութիւնը ճանաչելը, հասկանալը թէ աշխարհս անցնում է իւր աղետաւոր ճանապարհը և բնութիւնը, ճնշելով մեզ իւր տարրների ուժով, չէ աւելի իմաստուն և պատասխանատու քան հասարակ մեքենան, որ անողորմելի է գէպի արտասուախառն աղաչանքը մարդու, որին նորա անիւների սրածայր ատամները ճմլել են և կեանքից զրկել: Խօսք չը կայ, գեղեցիկ միխթարութիւն է: Ո՛հ, հազար անգամ աւելի լաւ է մինչև վերջը պատերազմելն և բարկութեան հառաչանքը շրթունքներում մեռնելը, քան հպատակիլն ու իրերի այդպիսի վիճակում ապրելը: Ո՛չ, մենք ճակատագրեան չենք: Երբ, հրաժարուելով մեր վիճակը հասկանալուց, մենք հնազանդութեամբ խոնարհում ենք մեր գլուխը, մենք հպատակում ենք Հօր կամքին: Հայրն ասում է մեզ. «Ձոր ինչ այժմ եսս գործեմ, դու ոչ գիտես»—Հայր, այդ էլ մեզ բաւական է: Ի՞նչ դարմանալի բան է, որ

Նորա խորհուրդներն ու նպատակները մերիններին համաձայն չեն: Մի՞թէ մենք ունինք Ամենաբարձրելոյ հայեացքն կամ Նորա չափը: Մի՞թէ զինուորը պէտք է պատերազմ երթայ միայն այն ժամանակ, երբ զօրավարը կը բացատրէ նրան պատերազմի ծրագիրը կամ որմնագիրը պէտք է կանգնէ պատն, երբ ճարտարապետը ցոյց կը տայ նրան շինուածքի մակարդակը: Մի՞թէ մենք անցաւոր արարածներա, որոց հայեցողութիւնը խաւարած է մեղքից, պէտք է հպատակենք միայն այն ժամանակ, երբ կը տեսնենք Յաւիտեանականի ճանապարհների նպատակները: Այ՛, մենք սլարտական ենք հեղութեամբ խոնարհելու մեր գլուխն և յիշելու. «Զոր ինչ եսս գործեմ, այժմ՝ ոչ գիտես» խօսքերը:

Եթէ այդ մենք այսօր չը գիտենք, վաղը կարող ենք իմանալ: «Դու ապա գիտատջիր», ասաց Յիսուս Քրիստոս: Այս խօսքերը մեզ համար արդէն դարձել են ճշմարտութիւն, որ փորձով հաստատուում է: Մեր կեանքի քանի քանի խաւար էջերը հասկանալի եղան մեզ այն ժամանակ, երբ մենք նրանց զննեցինք յընթացս շատ տարիների, նման այն հին նշանագիր արձանագրութեանց, որոնք անբացատրելի մնացին երեսուն կամ քառասուն դարեր և որոնք յանկարծ հասկացուեցան, որովհետեւ գտնուեցաւ մի բառ, որ նոցա միտքը բանալու բանալին տուեց մեզ: Դուք գանգատուում էիք ձեր անյաջողութեանց, ձեր անկատար մնացած յոյսերի, ձեր խանգարուած ծրագիրների, ձեզ հասած փորձանաց մասին, դուք մեղադրում էիք ձեր չար բաղդը, դուք յանդիմանում էիք, գուցէ, Աստծուն—և ահա այդ բոլոր փորձութեանց մէջ էր կայանում ձեր բարիքը: Անշուշտ այդքանը ձեզ համար բաւական էր, որ դուք խոնարհէիք և դառնայիք առ Աստուած: Դուք տրտնջում էիք, որ Նա փակում է ձեր ճանապարհներն, որոնցով գնում էին եռանդով այլք՝ աւելի բաղդաւորները և դուք չը գիտէիք, որ այդ կատարուում էր նորա համար, որ ձեզ գնեն միակ ճանապարհի վերայ, որ կարող էր ձեզ փրկել և առաջնորդել առ Աստուած: Բայց այժմ՝ դուք այս գիտէք և Ս. Գաւթի հետ միասին կարող էք ասել. «Ես մոլորուում էի, մինչև որ դու ինձ չը հարուածեցիր» այժմ ես պահում եմ քո խօսքը», այժմ դուք գանգատանաց

փոխարէն գործում էք ոչորմութեան գործեր և ձեր տրտնջանքը փոխուեցան յօրհնութիւնք:

Յամենայն դէպս, եղբարք, այստեղ աշխարհիս վերայ մենք կարող ենք, ինչպէս արդէն ասացի, մեզ հասած փորձանքների միայն փոքր մասը հասկանալ, վերջին վճռական բացատրութիւնը մեզ կը տրուի այս աշխարհիս սահմաններից դուրսը: Աստուած կարգարացնէ միանգամ իւր ճանապարհներն, ամեն գաղտնիք կը պարզուի և աստուածային իմաստութիւնը կը փայլի իւր մաքուր պայծառ փայլով: Այն ժամանակ մենք կ'իմանանք պատճառները բոլոր այդ անկարգութեանց, խռովութեանց, անարգարութեանց և չարի յաղթանակի, որոնք վրդովում են այժմ մեր հաւատը: Թող գիշերը մութն ու ցուրտ լինի, բայց մենք արդէն տեսնում ենք, որ լոյսը ծագում է. Նոյս, ո՛հ որքան քաղցր է այս խօսքը նրան, որ ենթարկուած է ծանր խօշական երազների, լոյս—մարդկութեան մռայլ պատերազմի մէջ տանջուողի դարաւոր վշտից յետոյ, լոյս—գիշերային խաւարից յետոյ, որոյ մէջ հաղարաւոր սերունդներ քաշ են ածում իրանց խղճով կեանքը, լոյս իւր հեղ և արդիւնաւոր ջերմութեամբ, լոյս, որ մեր հայեացքի առաջ բաց է անում երկնքի անսահման հորիզոնը, լոյս, որն որոնում էին բոլոր արդարներն, որոց չէր կարող երկիրս բաւարարութիւն տալ, լոյս, առ որ իրանց երեսը դարձնում էին մահից առաջ ճշմարտութեան բոլոր մարգարէները—այս լոյսը միանգամ կը լուսաւորէ և մեզ իւր անսահման փայլով:

Բայց Պետրոսը չէ լսում այն, ինչ որ Տէրը նրան ասում է. բոլորովին իւր մտաց մէջ ընկղմուած, յամառում է իւր գիտաւորութեան մէջ և աղաղակում է. «Այ լուսացես զոտոս իմ յաւիտեան»:

Խոստովանեցէք, եղբարք, որ մենք ամենքս էլ նոյնը կ'ասէինք, ինչ որ Պետրոսն ասաց, յափշտակուած մեզ նման իւր ոչնչութեան զգացմունքի գիտակցութեամբ: Թոյլ տար, որ նորա առաջ ծուներ իջնէր իւր վարդապետը—ոչ այդ նորա համար անհնարին է. թէ նորա սիրտն և թէ միտքը վրդովուում են—նա երբէք չի համաձայնիլ այդ բանին:

Նա իրան չտիազանց ստոր է համարում: Յիրաւի արդեօք այդ

այդպէս է: Ընդ հակառակն, արդեօք նա աւելի բարձր կանգնած չէր լինիլ, եթէ բաւականանար հնադանգութեամբ: Հօ աշակերտի իսկական խոնարհութիւնն ամենից առաջ այն է, որ կատարէ ուսուցչի կամբը:

Այս հանգամանքն ինձ խորհրդածել է տալիս: Պետրոս գիմնադրում էր Յիսուսին յանուն խոնարհութեան: Բայց մեր թշնամիքն էլ արդեօք յանուն նոյն խոնարհութեան չ'են զինաւորուում մեր դէմ, երբ մենք մնղթում ենք թողութիւն և դառնում դէպի Աստուծոյ ողորմութիւնը: Զորօրինակ գալիս ենք մի անկեալ էակի մօտ և ասում ենք նրան. «Հաւատա՛ Աստուծոյ, որ քեզ կ'անչում է նոյն իսկ քո փրկութեանդ համար, հաւատա՛ և դու կը նորոգուիս. հաւատա՛—և դու կարող կը լինես կոչել առ Աստուած՝ առ քո Հայրդ և ուղղել Նրան քո խնդիրներդ, իբրև որդի. հաւատա՛—և մեր յոյսերը կը դառնան քո յոյսեր, երկնային արքայութիւնը քո մասն և բաժինդ կը լինի»: Ամենից յաճախ ի՞նչ պատասխան են տալիս մեր այս խօսքերին: Այն, թէ «անկարելի է ընդունել այդպիսի պատգամն, որովհետև այդ կը նշանակէր անձնատուր լինել մեծամասութեան զգացման»:—Ուրեմն ե՞րբ, Վերջապէս, կարելի է հաւատալ փրկութեան և ընդունել Աստուծոյ թողութիւնը: Ապագայում երբ մենք աւելի լաւ կը դառնանք, երբ մենք կը յաղթենք մեր կրքերին, երբ մենք կը մերձենանք Աստուծոյ:

Եւ այսպէս դատելով դուք ձեզ հեզ և խոնարհ էք համարում: Մի՞թէ այդ է խոնարհութիւնը: Լաւ թափանցեցէք ձեր մոռի խորքը: Դուք յօժարութեամբ հաւատում էք փրկութեան, միայն այն պայմանով դուք իրանք ձեզ պատրաստէք նորա համար, դուք յօժարութեամբ համաձայնում էք, որ Աստուած օգնէ ձեզ հասնելու ձեր նպատակին, միայն որ նորա սկզբնաւորութիւնը ձեզ պատկանէր. դուք յօժարութեամբ կընդունէք ձեր մեղքերի թողութիւնն, բայց միայն դուք կ'ամենում էք արժանանալ նրան ձեր հառաչանքներով, ձեր ապաշխարութեամբ և ձեր արտասուքներով: Այս ամենը կը նշանակէ, թէ դուք կ'ամենում էք, որ հոգւոյ փրկութեան գործում առաջին դերը ձերը լինի և այս դուք անուանում էք խոնարհութիւն: Բայց սրանից դուք մերժելով թողութիւնն, որ Աւետա-

լոանը ձեզ տալիս է, և մերժելով Աստուծոյ որդւոց անունը ձեզնից, յիրաւի՞ հաւատարէք արդեօք, որ այգալէս դուք անձնատուր չէք լինում՝ աւելի նուրբ և փառանքաւոր փորձութեան: Արդեօք չէք ընդունում ու ճանաչում, որ ողորմութիւնն էլ մի տեսակ կապ է, և եթէ Աստուած փրկում է մեզ, դուք պէտք է Նրան պատկանիք: Արդեօք չէք խոտորվանում, որ եթէ Նա, ըստ գեղեցիկ բանից Ս. Գրոց, հազցնում է ձեզ արգարութեան զգեստն, որոյ սպիտակութիւնն օրինակ է նորոգեալ կեանքի, դուք չէք կարող նրան (զգեստը) քարշ ածել աշխարհի փաշտո ճանապարհների վերայ և բարեկամանալ ու ընկերանալ այնպիսի մարդոց հետ, որոնք օտար են ձեր յոյսերին: Չէք խոտորվանում արդեօք, որ մի անգամ ողորմութիւն գտած և յաւիտեական կեանքին մասնակից եղած լինելով դուք արդէն պարտական էք Աստուծոյ ծառայել: Արդեօք այս անձնազոհութիւնն, արդեօք այս անսպասման և անսահման անձնուիրութիւնն Աստուծոյ կամաց չէ՞, որ ստիպում է ձեզ դողալ, վախեցնելով ձեր հպարտ անկախութիւնն, արդեօք հէնց սրանով չէ՞ն բացատրուում ձեր բոլոր տառանմունքները, ձեր անվրձնականութիւնն ու ձեր հաշիւները: Եւ դուք այս կոչում էք խոնարհութիւն: Ոհ, ո՞չ, իսկական խոնարհութեան լեզուն այգալիսի չէ: Խոնարհ սիրտը հաւատում է թողութեան, ընդունում է ողորմութիւնը, բոլորովին ձգտում է դէպի նա, խորասուզուում է աստուածային ողորմածութեան մէջ, սորա մէջ տեսնում է իւր ապաստանարանն ու հովանիքը, ճգնում է ուրանալ իւր ինքնասիրութիւնն և հաճոյքն և ուրախութեամբ ընդունում է փրկութիւնն, համաձայն Աստուծոյ կամաց:

«Ոչ լուսացես դոռս իմ յաւիտեան», ասում է Պետրոս և Յիսուս խստութեամբ պատասխանեց նրան. «Եթէ ոչ լուսացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն», Այստեղ վարդապետի միտքը յանկարծ փերանում է աւելի բարձր շրջան, ինչպէս յաճախ նկատելի է այս նորա խօսակցութեանց ժամանակ: Մինչև ցայժմ՝ Նա, իւր աշակերտների ոտները լուսնալույսի կամենում է նրանց միայն խոնարհութեան դաս տալ, բայց Պետրոսի դիմադրութիւնը յիշեցրեց նրան այլ հոգււոր շուայումն՝ այն է խաչի մահուամբ մարդոց հո-

գիբը փրկելը: «Այժմ ոչ լուսացից զքեզ...» եղբայրք, մենք ամենքս էլ կարօտ ենք, որ Յիսուս Քրիստոս լուսնայ մեզ: Խորասուզուեցէք դուք ձեր մէջ, արդեօք ձեր կեանքն այնքան մաքուր է, որ կարողանայ դիմագրաւել կենդանի Աստուծոյ հայեացքին: Կարո՞ղ էք արդեօք դուք, այնպէս — ինչպէս էք — բարձրանալ Նորա երկինքն և Նորա հաղորդութեան մասնակից լինել: Դեռ ի հնումն, երբ երկնքում բնակում էին անսուրբ չաստուածներն, որոնք կրքերին և յանցանքներին անձնատուր էին, դեռ այն ժամանակ էլ մարդկային խիղճը, հնազանդելով մի խորհրդաւոր բնազդման ինզրում էր քառութիւն, փրկութիւն և առատութեամբ թափում էր զօհերի արիւնն, որպէս զի արդարութիւնը հաշտուի և ողորմի, աշխարհումս ամենուրեք թէ ամենալուսաւորեալ և թէ ամենից պակաս զարգացած ազգերի մէջ, կանգնում էին սեղաններ, որտեղից մաղթում էին ողորմութիւն և զօհ... Եւ դուք, որ հաւատում էք ամենարդար Աստուծոյ — միթէ կարօտ չէք մաքրութեան: Մի՞թէ մի կողմից ձեր բարի գիտաւորութիւնքն և միւս կողմից աստուածային ողորմութիւնը բաւական է, որ ձեր հաշտութեան և փրկութեան գործը կատարուի: Արդեօք այդ է ուսուցանում մեզ Աւետարանը: Արդեօք այդ են ուսուցանում մեզ առաքեալներն, որոնք անդադար խօսում են իրանց Վարդապետի փրկարար մահուան մասին: Արդեօք այդ է ուսուցանում մեզ Յիսուս Քրիստոս, իւր առ Պետրոս ուղղած խօսքերով, թէ «Այժմ ոչ լուսացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն»: Այ, այլ այդ ուսուցանում է Աւետարանն այն դպրոցի, որ չէ ճանաչում աստուածային սրբութիւնն և փրկութեան վարդապետութիւնն ու դաւանութիւնը հնացած է համարում, այն դպրոցի, որ ընդունում է քրիստոնէական դաւանութեան միայն մի մասն, որպէս զի մերժէ միւս մասն և որ յենում է Յիսուսի Քրիստոսի ողորմածութեան վերայ, որպէս զի Նորա փրկարար զօհաբերութիւնն անօգուտ հրատարակէ: Ինչ որ մեզ կը վերաբերի, եղբարք, մենք կը պահպանենք թէ մէկն և թե միւսը, կը յիշենք, որ փրկութիւնն միայն այնտեղ է, ուր իշխում է աստուածային արդարութիւնն իւր բոլոր իրաւունքներով, այնտեղ է, ուր մարդկութեան աստուածային ներկայացուցիչն, իւր

չարչարանքներով, սրբագործեց արդարութեան օրէնքը: Յիշենք, որ միայն հաւատով միանալով Սուրբ Զոհի հետ, որ յանուն մեղաւոր մարդկութեան զոհուեցաւ, մենք կարող ենք ողորմութիւն գտնել և մաքրուել. «Եթէ ոչ լուացից զքեզ, ոչ ունիս ընդ իս մասն»:

Պետրոսը դեռ ևս չէ ըմբռնում այս խօսքերի խորին միտքը. բայց միայն այն, ինչ որ նա լսում է, բաւական է նրան պաշարելու և զարհուրեցնելու: Եւ ահա նա, անչափաւոր թէ գիմարութեան և թէ զղջման մէջ, աղաղակում է. «Տէր, միմիայն զոտս իմ, այլ և զձեռս և զգլուխս»:

Ո՛վ չի հասկանալ նորա սրտի այդ հառաչանքը: Երեք տարի է, որ նա լսում է Նորա խօսքը, տեսնում է Նորա գործերը և հաղորդութիւն ունի նորա հետ: Նորա հետ մասն չունենալ — այս միտքը սարսափեցնում է նրան: Յիսուս Քրիստոսին ճանաչելուց յետոյ, այժմ ո՛ւր կարող կը լինի նա երթալ: Աշխարհս ի՞նչ կարող է տալ նրան փոխանակ այն բանի, ինչ որ Նորա մօտ գտել է. Պատասխանեցէք, դուք, ով թերահաւատ աշակերտներ, որոնք այժմ հեռու էք գտանուում՝ Վարդապետից և որոնք աւելի և աւելի ստոր իջնում էք, ինչպէս զառ ի վայր մակերևոյթի վերայ, որոյ ծայրից արդէն ձեզ անհնարին կը լինի վերադառնալու Նորա մօտ — պատասխանեցէք, կարո՞ղ է արդեօք աշխարհը ձեզ տալ համապատասխան ինչ այն բանին, ինչ որ ունէիք Յիսուս Քրիստոսի մօտ: Որպիսի՞ լոյս, որպիսի՞ ուրախութիւն, որպիսի՞ մխիթարութիւն, որպիսի՞ սէր կարող է ձեզ տալ աշխարհը: Ո՛հ, դուք այդ շատ լաւ գիտէք և երբէք այդ չէք մոռանալ: Եթէ դք ընթացել է Նորա լուսով, եթէ մէկը տեսել է երկինքն բացուած, եթէ մէկը ճաշակել է այդ ներքին խաղաղութիւնն ու աստուածային յոյսը, եթէ մէկը ճանաչել է ոչ մի աշխարհային բանի հետ անհամեմատելի այն սէրն, եթէ մէկը հոգւով թափանցել է առանց ինքնասիրութեան այն ողորմածութեան մէջ, բոլոր մնացածը նրան կը թուի անհոգի և ոչինչ բան: Այո՛, ես հասկանում եմ առաքեալի աղաղակը՝ «Տէր, միմիայն զոտս, այլ և զձեռս և զգլուխս»:

Գուցէ ձեզ զարմացնում է Յիսուս Քրիստոսի պատասխանը: Իրաւ

է, սկզբում դժուար է այն հասկանալը, բայց նորա համար, որ թափանցել է այդ պատասխանի միտքը, պարզ է, որ մինչև անգամ Աւետարանում համեմատաբար տակաւ են նրան հաւատար խորիմաստ և բարերար խօսքեր: «Աւաղելոյն չէ ինչ պիտոյ՝ բայց զի զոտսն լուանայցէ, քանզի ամենեւին սուրբ է»: Բացատրենք համեմատութեան օրինակն, որ առաջ բերեց փրկիչն և խրատն ինքն իրան բնականաբար կը հետեւի նրանից:

Երբ երկարատեւ ճանապարհից յոգնած ճանապարհորդը, շքնչասպառ Արեւելքի կիզիչ արեգակից և ծածկած անապատի այրող փոշիով, ճանապարհի մօտ կը նկատէ մաքուր ջրի աղբիւր—նա շտապեցնում է իւր քայլերն, հասնում է գետի ափն, յօժարութեամբ խորատուզուում է նորա ալիքների մէջ և սրանցից դուրս է գալիս արդէն զովայած և մաքրուած: Մաքրուած, այն. բայց հէնց որ նա կրկին ճանապարհ կրնկնի, անապատի փոշին նորից կը կեղտոտի նորա ոտները և հասնելով իւր բնակարանը նա պէտք է լուանայ նրանց, որպէս զի բոլորովին մաքրուի: Այս—օրինակն է, իսկ նորա մէջ բովանդակուող միտքն այս է:

Երբ մարդս—որ գնում է աշխարհի սովորական ճանապարհով և ճանաչում է, թէ ինչպէս չարիքը տակաւ առ տակաւ պաշարում է նորա ամբողջ էութիւնը, թափանցում է նորա մտքի, նորա զգացմանց, նորա ամբողջ կեանքի մէջ այն աստիճան, որ խիղճը նրան հանգիստ չէ տալիս—երբ այդպիսի մարդն իւր ճանապարհին կը հանգիստի փրկող և ուղորմող Աստուծոյ, երբ նա իւր հայեացքը հորա վերայ կը գցէ, լի հաւատով և խոնարհ զղմամբ, Նրանից թողութիւն խնդրելով—այն ժամանակ նա յանկարծ կը զգայ, թէ ինչպէս նորա սրտի մէջ ընկնում է վսեմ ուղորմութեան խօսքը, այն ժամանակ նա թողութիւն գտած է, կատարեալ թողութիւն, այն ժամանակ նորա բոլոր անցեալը ջնջուած է, ամեն ինչ նորոգուում է և նորա կեանքը նորից է սկսուում: Ինքն Յիսուս Քրիստոս ասում է, որ այդպիսի մարդուն այլ ևս ոչինչ հարկաւոր չէ, այսինքն հորա թողութիւնը կատարուած իրողութիւն է, որ կախումն չունի ոչ նորա սրտի շարժումներից, ոչ նորա զղջումից և ոչ արտասուքներից, այսինքն նորա ճանապարհն առ Աստուծո՛ւմ բաց է և որ

այնուհետեւ Նա կարող է Աստուծոյ հետ հաղորդութիւն ունենալ, ի շնորհս որդիական հաւատարմութեան և սիրոյ զգացմանց: Ես ասացի, որ այլ ևս նրան ոչինչ հարկաւոր չէ. բայց հետեցէք այդ թողութիւն գտած քրիստոնէի ետեւից, որ իւր սրտում այնպիսի երջանկութիւն է զգում, որպիսին չունեն և հրեշտակները և որ խաչի պատուանդանի մօտ բայց է անում և տրկանում իւր սիրտը, լի երախտագիտութեամբ—հետեցէք նորա ետեւից, հէնց որ նա կեանքի ճանապարհի վերայ մի քանի քայլ կանէ—արդէն մեզքը պաշարում է նրան: Այս, այդ նրան ատելի մեղքը դեռ շատ անգամ նրան կը տիրէ, այս, երկրիս փոշին դեռ շատ անգամ կը ծածկէ նորա ոտները: Նա մաքրուած էր, բայց նրան հարկաւոր է, որ այն ողորմածութիւնն, որ ջնջեց նորա անցեալ յանցանքներն, օր աւուր հսկէ նորա վերայ, թողութիւն տալով նորա մանր մեղքերին, տատանմանց և թուլութեանց, որոնցից ազատ չեն և՛ ճշմարիտ քրիստոնեայք անգամ, նրան հարկաւոր է, որ—լսա Քրիստոսի արած համեմատութեան—նորա ոտներն, որոնք կոխում են երկրիս փոշին, ամեն օր լուացուին, և այն ժամանակ նա բոլորովին մաքուր կը լինի:

Այս է Փրկչի Պետրոսին ասած խօսքերի միտքը և իմ կարծիքովս նա Աւետարանի մէջ յայտնուած ամենամխիթարական գաղափարներից մէկն է. իրօք բաւական չէ թողութիւն քարոզել այն եղանակով, ինչպէս այս ընդունում է հոգին, որ առաջին անգամ դառնում է առ Աստուած, ով ստացել է թողութիւն, նրան մնում է լուծել մի հարց, որ նոյնքան աւելի լուրջ է, որքան զգայուն է նորա խիղճը, այն է, թէ ի՞նչ հարկ է նրան մտածել այն յանցանքների ու մեղքերի մասին, որոնք գործել է նա Աստուծոյ ճանաչելուց յետոյ: Նա կարծում էր, թէ հաւատարմութեամբ կը ծառայէ Աստուծոյ, որովհետեւ եւանդի առաջին բողոքներում այդ նա դիւրին էր համարում, նրան թուում էր, թէ իւր ազօթքներն ու զոհերը հեշտութեամբ և խաղաղութեամբ կը բարձրանան առ Աստուած և թէ հնազանդութիւնն ու հպատակութիւնը դէպի Նա կը լինեն իւր յատկութիւնը, որովհետեւ խոնարհութեան մէջ են ամբողջութեամբ իւր խաղաղութիւնն ու երջանկութիւնը: Հանաչում էր արդեօք նա այն ժամանակ թէ որպիսի ծանր և աղէտալից պատերազմներով

պիտի անցնէ նա իւր ճանապարհը: Գիտէ՞ր արդեօք նա այն ժամանակ, թէ որքան յամառ կենդանութիւն կայ նորա մարմնոյ և հպարտութեան մէջ, որոնք նա յաւիտեան մեռած էր համարում: Նախատեսանում էր արդեօք նա այն ժամանակ, թէ քանի քանի ստորացուցիչ և ծանր զիջողութիւնք պիտի անէր նրանց: Եւ ահա այժմ այս ամենը ճանաչելով, բեկեալ սրտիւ և յուսահատ նա ինքն իրան հարցնում է, թէ արդեօք իրան շնորհուած թողութիւնն ի չարր գործ չ'է դրել ի կորուստ անձին, և յաւիտեան անարժան չ'է գլուխուել երկնաւոր Հօր որդւոյ անունը կրելուն: Եւ ահա հէնց այսպիսի անձանց համար մանաւանդ թանկագին է փրկի խոստումն և այսպիսիք պիտի խոստովանեն, թէ Աստուած, որ լուաց նոցա անցեալ մեղքերը, կը լուանայ և նոցա ներկայ մեղքերն և այսպէս օրից օր կը տանէ նրանց դէպի մաքրութիւն:

Շատ վտանգաւոր վարդապետութիւն է այդ, կասեն մեզ, որ կը տանէ դէպի բարոյական անզսպութիւն, վասն զի մարդս աչքի առաջ ունենալով անընդհատ թողութիւնը, առանց վրդովուելու և պատերազմի կենթարկուի մեղքի իշխանութեան: Այո՛, եղբարք, եղած են այդպիսի օրինակներ և անտարակոյս կը լինեն այսուհետեւ էլ, այո՛, մարդս ունի այն զարհուրելի ընդունակութիւնն, որով մինչև անգամ ամենասուրբ ճշմարտութիւնքը զեղծանում է և ապականում ու առուջարար գեղից թոյն է հանում: Այո՛, այդ վարդապետութեան միաբը եղծանելով, կարելի է հասնել կորստեան և թողութիւնն ի դատապարտութիւն դարձնել: Թո՛ղ այդ մասին մտածեն և հոգան նոքա, ոյք իրանց յանցաւոր կեանքը ծածկում են բարեպաշտութեան զիմակով և հանգստացնում են իրանց Աստուծոյ անսահման ողորմածութեան գաղափարով: Թո՛ղ դորա վերայ մտածեն նոքա, որոնք իրանց զեկավար ունին սոոր հաշիւները և կարծում են զորօրինակ, թէ նոցա բարեպաշտութեան այսօրուան յայտնութիւնը լուաց նոցա երեկուան զեղխութիւնն և կը լուանայ վաղուան էլ: Թո՛ղ նոքա մտածեն դորա վերայ, թո՛ղ նոքա իրանք իրանց ասեն, թէ Աստուած թոյլ չի տալ կատակ անել, թէ Նորա անունը—հուր ծախիչ է: Թէ Նորա ողորմութիւնն ի չարը գործ դնելով կամաց կա-

մնայ և՛ զլիցման անընդունակ կարող են դառնալ: Թող նորա յիշեն, թէ ինչպէս սարսափելի է այն մարդոց վիճակն, որոնք Աստուծոյ սէրն աւիթ և հիմն են դնում իրանց զեղխ կեանքի, թող նորա յիշեն, թէ այգպիսի հաշիւն ամենալաւ ապացոյցն է, որ նորա երբէք հաւատացած չեն, երբէք ճշմարտապէս սիրած չեն և, որ իոյր յախշտակութեամբ նորա գնում են դէպի անխուսափելի դատապարտութիւն:

Բայց մի՞թէ մեղաւորները չարագործութիւնք կարող են մեղարգելք լինել աստուածային ողորմութիւնն աւետարանելու, մի՞թէ այն մարդոց կեղծաւորութիւնն, որոնք ձգնում են նրանից զգուս քաղել, կարող է մեղ ստիպել, որ մենք նրան ծածկենք նոցանից, որոնց նա փրկութիւն կը սայ: Ո՛չ, եղբարք, ոչ: Համաձայն Աւետարանին միշտ կը քարոզենք մարդոց թողութիւն անկեղծ սրտով և անգագար կը կրկնենք նոցա առաջ, թէ Աստուած, ըստ առաքելոյ ասութեան, հաւատարիմ է նրանց արդարացնելու համար: Մենք կասենք այդ մարդոց, որոնք իրանց անկեղծութեամբ արգէն պաշարեալ են գաղտնի անհանգստութեամբ և տրտմութեամբ, որոնք խոչընդոտ են լինում նրանց առ Աստուած վերադառնալու, մենք կասենք այգպիսիներին՝ «Այլ ևս ինչի՞ էք սպասում, Նորա մօտ գնալու համար: Գուք ասում էք, թէ չէք հաւատում՝ ձեր թողութեան, բայց ե՞րբ ուրեմն գուք նրան կը հաւատաք: Ն՛րբ գուք Նորա կարիքը կրկգաք: Ն՛րբ Նա ձեզ աւելի անհրաժեշտ կը լինի: Թէ՛ գուք ձեզ այնքան արգար չէք համարում: Բայց մի՞թէ Աստուծմէ հեռու գուք կը գտնէք արդարութիւն: Մի՞թէ սա անվճարականութեան այն վիճակի մէջ է, որ ձեզ թուրացնում է և գրկում է ձեզ արիւթիւնից: Մի՞թէ Նա այս բաժանեալ կեանքի ու երկբայութեամբ լի սրտի մէջ է: Սրբութիւն, զօրութիւն, յաղթութիւն — ո՛ր են սոքա եթէ ոչ Տիրոջ գագուս, Տիրոջ, որոյ առաջ մեղանջել էք: Գնացէք Նորա մօտ, հաւատացէք Նորա սիրոյն, սրանով ներշնչուեցէք ու լցուեցէք, իսկ եթէ ձեզ զարհուրեցնում է և արգելում դառաւորանի գաղափարը, յիշեցէք երջանկայիշտակ Օգոստինոսի հետեւեալ խօսքերը. «Եթէ գու կամենում ես փախել Աստուծոյ բարկութիւնից, ընկիր Նորա գագը»:

«Եւ դուք ոտքեր էք»... Երբ Յիսուս այս խօսքերն արտասանեց՝ խորին տրամուխեան զգացմունք թափանցեց Նորա սիրտը։ «Եւ դուք ոտքեր էք»—առում է նա և աւելարցնում։ «այլ ոչ ամենեքին»։ Այնտեղ էր և Յուդա Իսկարիօթապետը։

Այսպէս այս դերձին հրաժարման և սրտի ղեղման ժամին, երբ մարդու Արդին, կարօտ համակրութեան, իւրացիներէ հաղորդութեամբ պատրաստուում էր այդ ողբալի գիշերուան պատերազմի համար—Նա տախտակ էր տանել մասնիկ ներկայութեան։ Բարձրագոյն ողորմածութեան յայտնութեան հետ երեւցաւ և չարութեան ուղին իւր ամենազղուելի և ամենատեղի կերպարանքով։ Յուդան էլ այստեղ էր։

Գիտէ՞ք ինչ խրատ եմ հանում ես որանից։ Ես յաճախ հանդիպել եմ այնպիսի բրիտանեաների, որոնք տատանուում էին հաւատի մէջ և գրեթէ հասել անաստուածութեան, շնորհիւ գոյթեցեցին խռովութեանց և հերձուածների, որոնք ու եկեղեցուն յիշտ են պատճառում։ Եթէ նրանց լսելու լինենք, կերելի որ Աստուած այլ ևս խնամք չէ տանում իւր դիտաւորութեանց կատարման, որովհետեւ թող է տալիս չարին այնպիսի յաղթանակներ տանելու։ «Ո՛վ մեզ կը վերադարձնէ նախկին օրերի եկեղեցին» աղաղակում են հոգաւ։ Նախկին օրերի եկեղեցի։ Բայց ո՞ւր հարկ է նրան որանել։ Անշուշտ ոչ եկեղեցական յեղափոխութեան (Գերմանիացում) օրերում որովհետեւ դուք գիտէք թէ որպիսի զարհուրելի պատերազմ և որպիսի խռովութիւնք պաշարած էին նրան այն ժամանակ, և ոչ էլ անշուշտ միջին դարերում։ Կամ գոնէ՞ նրան հարկ է որոնել առաքեալների ժամանակներում։ Բայց ոչ ժամանակի եկեղեցու վերայ, իբրեւ իւր անդամներով ոտքի եկեղեցույ գաղափարի վերայ նայելու համար, հարկաւոր է լինի զգուշացնելու զայն թողութիւն և մոռանալ բոլոր հերձուածներն ու զայն թափալու իւններն։ որոնք կրճուում ու գիշատում էին նորոք իրենց զգուշացնելու հարկաւոր է աւելի առաջ երթալ թողութիւն։ Այսպէս նաեւ է եկեղեցին այն կերպարանքով ինչպէս զիսկ նրանց զգուշացնելու հարկաւոր է եկեղեցին, որ կազմուած էր զայն իրար իրար յիստերիկ զգուշացնելու և կոչած առաքեալներից։

մի խօսքով վերնայարկի եկեղեցին, և ի՞նչ այնտեղ էր և՛ Յուզան, Յուզան՝ տասներկուսներից մէկը: Բայց և այնպէս այնտեղ էր և ինքն Քրիստոս և Նորահետ միասին աշխարհի փրկութիւնն, սպազան, յաղթութիւնը: Ի՞նչ իրաւունքով դուք յուսահատուում էք ժամանակակից եկեղեցու վերաբերութեամբ: Ի՞նչ իրաւունքով պնդում էք, թէ՛ Նորա Գլուխը թողել է նրան:

Ահա իմ երկրորդ խորհրդածութիւնս: Այնտեղ էր Յուզան: Արդեօք խորհրդածել էք դուք երբ և իցէ այն մասին, թէ՛ Յիսուս Քրիստոս Յուզայի առաջ ծուներ է իջել, որ Յիսուս Քրիստոս Յուզայի ոտներն է լուացել:

Այսպիսի տեսարանի առաջ ակամայ մարդուս միտքը կը խառնուի և ակամայ կաղաղակես. Այդ արգէն չափազանց է, չափազանց: Ո՛հ, մեր սիրտը շատ նեղ է, նա անընդունակ է հասկանալու առաւանձային ողորմութեան չափը: Յիսուս Քրիստոս մինչև այդտեղ խոնարհեցաւ: Նա գցեց մատնչի վերայ վերջին հայեացք, վերջին անգամ մունջ ինդրի կոչումն արու և իւր անմեղ ձեռքերով լուաց նորա ոտները:

Եղբարք, Յիսուս մեզ օրինակ թողեց: Մենք կոչուած ենք բարի անելու ամենքին, ոչ միայն նոցա, ոյք մեզ սիրում են, այլ և նոցա, ոյք մեզ ստում են, ոչ միայն նոցա, որոնց մենք սիրում ենք համակրութեան զգացմամբ, այլ և նոցա, ոյք մեզ հաճոյաւ կան չեն, ոտելի են: Ինչպէս ծանր է այս սպարտականութիւնը մեզ համար և որպիսի դժգոհութեամբ կատարում ենք նրան: Երբ խօսք է լինում աղքատներին օգնելու մասին—մեզ համար բաւական է, որ նկատենք նոցա մէջ որեւէ յանցանոր սովորութիւն, որեւէ խորամանկութիւն կամ ստութիւն, որպէս զի հրաժարուինք մեր սպարաբը կատարելուց: Մենք մինչև անգամ չենք կամենում ընդունել, որ չափազանց աղքատութիւնը ստորացնում է հոգին, որ նա տանում է դէպի ծանր փորձութիւններ և որ մենք էլ անձնատուր կը լինէինք նրանց, եթէ ենթարկուէինք փորձի: Մենք կամենում ենք ունենալ գաղափարական աղքատներ, որոնց չքաւորութիւնը չը նուազեցնէր ոչ նոցա հոգու մեծութիւնը, ոչ համըմանց աղնուութիւնը, որպէս զի կարողանայինք մենք էլ

նրանց օգնել: Ի շնորհս մեր փափկասիրութեան մենք զգուում ենք ձեռք մերձեցնել բարոյական լիքերին և այսպէս առանց ցաւակցութեան արտաքսում ենք աղքատներին խիստ և դառն խօսքերով: Ո՛վ եղբարք, փարիսեցի չը լինելու համար—մաքսուորի հետ յարաբերութիւն ունենալին գողալը մի՞թէ փարիսեցութիւն չէ—օրինակ առնենք մեր Փրկչից, որ ծուռը իջաւ Յուդայի առաջ:

Եւ նա էր Սուրբն ու Արդարն, որոյ հոգին աղատ էր չարիքից, իսկ մենք... մեզնից իւրաքանչիւրս ունի իւր պատմութիւնը, վաստակամիտութեանց, ցանկութեանց և գաղանի կրքերի պատմութիւնը: Մեր օգնութեան կարօտ աղքատների և մեր մէջ տարբերութիւնն աստիճաններն են և ոչ մեր էութիւնքը: Բացի գրանից մենք նոցա կողմից շատ հազիւ հանդիպում ենք չար և դառն մատնութեան ու անհաւատարմութեան: Մենք էլ կարող էինք նոցա նման լինել, միայն Աստուած պահպանեց մեզ գրանից—այս է բոլոր տարբերութիւնը—: Յիսուս մարմնացած սրբութիւն էր իսկ Յուդան... Յուգան Յուգա էր:

Մենք երբ կը վարժուենք սիրել, երբ մենք գլխած ու ուրումս՝ կը լինենք նրանց, որոնք հեզ են, համբերող և յուսացող: Երբ մենք՝ Աստուծոյ շնորհիւ միայն գոյութիւն ունեցողներս կը տապաւորենք մեր յիշողութեան մէջ, որ Տէրն, որին մենք ծառայում ենք, լուսաց Յուդայի ոտները:

Յիսուս աշակերտների ոտները լուանալից յետոյ դառնալով դէպի նորա աստղ. «Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր, և բարւոյք ասէք, քանզի եմ իսկ»: Եղբարք, ո՞վ չէ զգում թէ այս խօսքերի մէջ ուրբան աստուածային զօրութիւն և իշխանութիւն կայ, ո՞վ չէ տեսնում նոցա վերայ մեծութեան կնիքն, որ ոչ մի ճարտարախօս չէ կարող արտայայտել—այդպիսին չի հասկանալ, թէ ինչ է գեղեցկութիւնն, ինչ է մեծութիւնն ու վսեմութիւնը. Դուք կոչէք զիս Վարդապետ և Տէր... Ուրեմն եթէ ես, Տէրս ու Վարդապետս, լուսցի ձեր ոտները, դուք էլ պէտք է լուանաք միմեանց ոտները»:

Անցան տարիներ, փոխուեցան սովորութիւնք, բայց իրատական օրինակը կանգնած է մեր առաջ, ցոյց տալով մեզ թէ իսկական

մեծութեան կարելի է հասնել միայն սրտացաւ խոնարհութեամբ: Խոնարհութիւն... Արքան հեշտ է արտասանուում՝ այս խօսքն և որպիսի դժուարութեամբ է նա իրագործուում: որքան դժուար է մերժել ունայն փառքը, փառասիրական ցնորքները և այն ամենն, որ մեծ է մարդոց աչքում: Իսկ փոքր և աննշան Աստուծոյ առաջ, և ընտրել իւր համար այլ մասն և բաժին, գուցէ անձնուրացութեան և զոհաբերութեան բաժինն: Արպիսի Զանք ու ձիգն, որպիսի յաղթանակ և ինչպէս այս ամենն տակնուվրայ է անում և վրդովում՝ մեր աւտօրեայ մտածողութիւնները: Այո, մեր երեւակայութիւնը լուսաւորէ կարող է ձգտել դէպի այդ գաղափարը, բայց նորա իրագործել, նորա ցոյց տուած ճանապարհով առաջ երթալ և նորա մէջ տեսնել իւր կոչումն ու երջանկութիւնը—այդ հրաշք է, որ գործ դնել անհնարին է մարդկային զօրութեան համար և իրագործելի ու հնարաւոր միայն Աստուծոյ: Տէր, իրագործիր այն, Ո՛վ ամենակարող Աստուած, իրականացրու՛ այդ գաղափարը մեր սրտերի մէջ և լուսաւորիր հարստութիւնից կուրացած մեր աչքերը խոնարհ ողորմածութեան մաքուր և Աստուածային լուսով:

Բ Է Բ ՈՒ Է